ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ENPARD-ն աջակցում է 40 առաջնային արտադրության խմբերի գործնական ծրագրերին

ք. Երևան, փետրվարի 18, 2016թ.

Հայաստանում ENPARD ծրագրի «Արտադրող խմբերի և արժեշղթաների զարգացում» տեխնիկական աջակցության բաղադրիչի շրջանակներում ս.թ.-ի փետրվարի 8-12-ը **հնդկացորենի, ոչ-ավանդական բանջարեղենի, մրգի և հատապտուղների արժեշղթաներում ներգրավված Շիրակի, Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի և Արագածոտնի թվով 40 առաջնային արտադրության խմբերը ներկայացրեցին իրենց գործնական ծրագրերը:**

Առաջնային արտադրության խմբերը (33-ը՝ հնդկացորենի, 4-ը՝ ոչ-ավանդական բանջարեղենի և 3-ը՝ մրգի ու հատապտուղների) խորհրդատուների օգնությամբ շուրջ երկու ամիս շարունակ պատրաստում էին իրենց գործնական ծրագրերը: Յուրաքանչյուր խմբի համար մշակվել է առանձին ծրագիր՝ ելնելով համայնքի կլիմայական պայմաններից, տեղանքից, առկա ռեսուրսներից, խմբի անդամների քանակից և այլ առանձնահատկություններից: Ֆերմերները վստահությամբ և լավատեսությամբ ներկայացրեցին իրենց համայնքների գյուղատնտեսական նկարագրերը, արտադրության հեռանկարները, մարքեթինգի, իրականացման և ֆինանսական պլանները (ներառյալ ENPARD-ի կողմից տրամադրվող դրամաշնորհները և սեփական ներդրումները), ծախս/շահույթ հաշվարկները և գործնական ծրագրերի այլ մանրամասները:

Առաջնային արտադրությամբ զբաղվող յուրաքանչյուր խումբ առաջին տարվա ընթացքում ENPARD ծրագրի կողմից կստանա անհրաժեշտ նյութեր (սերմ, պարարտանյութ) և սարքավորումներ (տեխնիկա, գործիքներ): Ծրագրի հետագա քայլերն են աջակցել արտադրող խմբերին՝ գրացվելու որպես գյուղատնտեսական կոոպերատիվներ և կանոնակարգելու իրենց գործունեությունը:

Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման ծրագիրը (ENPARD) ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և նպատակ ունի Հայաստանում աջակցել գյուղատնտեսության կայուն զարգացմանը: Ծրագրի բաղադրիչներից մեկը «Արտադրող խմբերի և արժեշղթաների զարգացում» տեխնիկական աջակցության ծրագիրն է, որն իրականացվում է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (ՄԱԱԶԿ) և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից՝ Ավստրիական զարգացման գործակալության կողմից տրամադրված լրացուցիչ ֆինանսական աջակցությամբ: Տեխնիկական բաղադրիչի հիմնական նպատակն է աջակցել գյուղատնտեսական կոոպերատիվներին և արտադրող խմբերին՝ գյուղմթերքի արժեշղթաների զարգացման հարցում:

Ծրագիրը մեկնարկել է 2015թ. հունվարին և կտևի 36 ամիս:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել.
ENPARD Հայաստան, «Արտադրող խմբերի և արժեշղթաների զարգացում» ծրագրի ՄԱԱԶԿ/ՄԱԶԾ թիմ
Հեռ: +374 43 500105
Էլ. փոստ: enpard.armenia@gmail.com,enpard-armenia@unido.org

Եվրոպական միություն

AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

UNITED NATIONS INDUSTRIAL DEVELOPMENT ORGANIZATION

Empowered lives. Resilient nations.

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման գործակալության կողմից:

Հայաստանում ԵՄ պատվիրակություն
Հեռ: +374 10 54 64 94
Ֆաքս: +374 10 54 64 95

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:
Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) կողմից: